Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1510-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՆԴԻԿԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. «Սնդիկի մասին» օրենքով սահմանված հասկացությունները սույն կարգում օգտագործվում են նույն իմաստով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքից սնդիկի արտահանումը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականաց-նող պետական կառավարման համակարգի լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից տրամադրված սնդիկի արտահանման համաձայնության առկայության դեպքում:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված համաձայնությունն ստանալու համար իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հայտատու) լիազոր մարմին են ներկայացնում «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր (sw.gov.am)» համակարգի միջոցով ձևավորված էլեկտրոնային հայտը և «PDF» ձևաչափով թվայնացված հետևյալ փաստաթղթերը՝

1) սնդիկի արտահանման նպատակը ներկայացնող տեղեկանք.
2) ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված՝ առևտրային փաստաթղթեր.
3) բեռնափոխադրման պայմանագիր.

4) ապրանքի ծագման սերտիֆիկատ.

5) «Մնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի կողմ (այսուհետ՝ կողմ) հանդիսացող երկիր սնդիկի արտահանման դեպքում ներմուծող կողմի լիազոր մարմնի գրավոր համաձայնությունն առ այն, որ սնդիկն օգտագործվելու է «Մնդիկի վերաբերյալ» կոնվենցիայով ներմուծող կողմին թույլատրված եղանակով կամ էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով.

6) «Մնդիկի վերաբերյալ» կոնվենցիայի կողմ չհանդիսացող երկիր արտահանման դեպքում ներմուծող երկրի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև հավաստագիր առ այն, որ ձեռնարկվել են միջոցներ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար և ներմուծվող սնդիկն օգտագործվելու է միայն այն եղանակով, որը «Մնդիկի վերաբերյալ» կոնվենցիայով թույլատրված է կողմ հանդիսացող երկրներին կամ ներմուծվելու է էկոլոգիապես անվտանգ ժամանակավոր պահպանման նպատակով.

7) ավտոմոբիլային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված վտանգավոր բեռներ փոխադրելու թույլտվությունը.

8) երկաթուղային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում բեռնառաքիչ (բեռնափոխադրող) կազմակերպության ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի N 892-Ն որոշմամբ սահմանված կարգով ստորագրված և հաստատված վտանգավոր բեռի բնութագիրը.

9) օդային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշմամբ սահմանված՝ դեպի Հայաստանի Հանրապետություն կամ Հայաստանի Հանրապետությունից դեպի դուրս վտանգավոր բեռների օդային փոխադրումների համապատասխան թույլտվությունը:

5. Լիազոր մարմինը սնդիկի արտահանման վերաբերյալ համաձայնությունը կամ մերժումը կամ փաստաթղթերի փաթեթի լրակազմման, հայտի ու փաստաթղթերի տվյալների ճշգրտման առաջարկը տրամադրում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված հայտը և փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակի միջոցով:

6. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը կամ տվյալները թերի լինելու դեպքում լիազոր մարմինը, նշելով հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները, հայտատուին առաջարկում է 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը կամ տվյալները:

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքում հայտը կրկին ներկայացնելիս սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը և տվյալները թերի կամ դրանցում առկա տեղեկություններն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված լինելու դեպքում՝ փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կամ սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում՝ սահմանված ժամկետին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը կայացնում է հայտը մերժելու մասին որոշում՝ սույն կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը և տվյալները թերի կամ դրանցում առկա տեղեկություններն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված ներկայացված լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերը կամ ճշգրտված տվյալները սահմանված ժամկետում ներկայացված չլինելու հիմքով:

8. Ֆիզիկական անձանց (բացառությամբ «Սնդիկի մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված անհատ ձեռնարկատերերի) կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից սնդիկի արտահանումը, որպես անձնական օգտագործման ապրանք, արգելվում է:

9. Ֆիզիկական անձանց կողմից սնդիկի արտահանման համար ներկայացված հայտը լիազոր մարմնի որոշմամբ մերժվում է հայտն ստանալու

օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված հիմքով:

10. Լիազոր մարմինը սույն կարգի 3-րդ կետով սահմանված համաձայնությունը հայտատուին տրամադրելուց կամ հայտը մերժելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

07.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ